

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստանը հրավիրում է մասնակցելու

“Անցումը պատանեկությունից չափահասության Հարավկովկասյան երկրներում”

թեմայով սեմինարին, որը նվիրվում է ԵՊՀ 90-ամյակին

Ե՞րբ՝ 2009թ. դեկտեմբերի 21-ին, ժ. 14:30-17:00
Որտե՞ղ՝ Աբովյան 52, ՀՌ-ԿԿ-Հայաստան, սենյակ 305
Լեզուն՝ Հայերեն

Ընդհանուր ակնարկ. 2007թ. սեպտեմբերից մինչև 2009թ. հունիսը, երեք հարավկովկասյան երկրների, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի հետազոտողների կոնսորցիումը՝ Եվրամիության INTAS ծրագրի շրջանակներում իրականացրել է “Երիտասարդության անցումը Հարավկովկասյան երկրների տնային տնտեսությունների համատեքստում” ծրագիրը: Դրա շրջանակներում հավաքագրվել է 1971-1976թթ. ծնված 1215 երիտասարդների քսան տարվա կյանքի պատմությունը ներկայացնող տվյալներ, մասնավորապես նրանց կրթության և աշխատանքային առաջընթացի, կացարանի, ընտանեկան կարգավիճակի փոփոխության և ազատ ժամանցի վերաբերյալ: Ընտրանքի հիմք է ծառայել ՀՌ-ԿԿ 2005թ-ի Տվյալների հավաքագրման նախաձեռնության հետազոտությանը մասնակցած տնային տնտեսությունների ցանկը:

2008թ. ընթացքում խորացված լրացնող հարցազրույցներ են անցկացվել 20 հարցվածների հետ: Ծրագրի նպատակներն էին՝ ստանալ Հարավային Կովկասում երիտասարդների և նրանց կյանքի փուլերի փոփոխությունների վերաբերյալ նոր տվյալներ և փորձարկել այդ փոփոխությունների ուսումնասիրման մեթոդաբանական մոդալիտետները: Հավաքագրված տեղեկությունների վերլուծության համար համակցվել են դեպքերի պատմության վերլուծության և հաջորդական վերլուծության մեթոդները՝ կիրառելով այնպիսի վիճակագրական փաթեթներ, ինչպիսիք են TDA, SPSS և STATA: Հետազոտության հիման վրա տպագրվել են մի շարք [հոդվածներ](#):

Հետազոտության հիմնական արդյունքները կներկայացնեն Հայաստանի աշխատանքային թմի ներկայացուցիչները՝ տգդ Հեղինե Մանասյանը, տգթ. Ռուբեն Եզանյանը, Հովհաննես Հարությունյանը և քաղաքագիտության մագիստրոս Գոհար Խաչատրյանը: Սեմինարի ընթացքում կքննարկվեն հետազոտության մեթոդաբանությունը, հարցաշարը և հիմնական արդյունքները:

Ծրագրի վերջին՝ տեղեկությունների հանրայնացման փուլը նշանավորող սեմինարը նվիրված է Երևանի պետական համալսարանի 90-ամյակին:

Սեմինարը նախատեսված է երիտասարդության կրթության և աշխատանքային առաջընթացի հարցերով հետաքրքրված հասարակագետ հետազոտողների, երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների, պետական պաշտոնյաների և այլ շահագրգիռ անձանց համար:

Գրանցվելու կարգը. Սեմինարին մասնակցելու Ձեր մտադրության մասին տեղեկացրեք խնդրեն crrcnews@crrc.am էլ. հասցեով կամ 58-14-50, 58-13-30 հեռախոսահամարներով՝ մինչև ս. թ. դեկտեմբերի 18-ը, ժ.17.00-ը՝ նշելով Ձեր աշխատավայրը և պաշտոնը: